*և հանապազ չարչարէր զինքն ի յուսուցանել զմանկունս եկեղեցւոյ. ի սաղմոսն, ի յաղօթքն, ի չարական, ի գրագրութիւն, ի ժամակարգութիւն. զի գրեաց ընտիր և անսղալ աղաւթամատոյց և մեկնիչք և տաւնացոյց ի լաւ օրինակաց և ուսոյց ի Դ ընտիր գրագիր: Եւ ասաց սուրբ վարդապետս մեր, թէ պարտ է աւետեաց աստուածածնին Բ. աւր տօն կատարել, ի յապրիլի Զ և ի Նիսան ի Ժ.Զ նախատօնակ առնել, և յապրիլի Է և Նիսան ի Ժ.Է տաւն աւետեաց աստուածածնին կատարել. մինն վասն երկնաւորաց և միւսն վասն երկրաւորաց: Զի Բ հետ աւետիք եա Գաբրիէլ հրեշտակապետն կուսին Մարիամու աստուածածնին. զմինն ի Գ ժամն ի վերայ աղբերն և զմինն ի Զ ժամն ի սենեկին: Եւ զՍուրբ աստուածն ասել. որ մարմնացար վասն մեր, ողորմեա մեզ: Եւ ի Ղազարու տօնէն մինչև ի յաւագ ուրբաթն ասել զՍուրբ աստուածն որ եկիր և գալոց ես և ուրբաթ օրն Գ Սուրբ աստուած, որ մատնեցար, որ խաչեցար, որ թաղեցար: Եւ ճշմարիտ է. աներկբայելի, զի յառաջմէ ի սուրբ հարցն է ասացեալ. ըստ Սողոմոնի որ ասէ. Եթէ ոչինչ գոյ ի ներքոյ արեգականս, զոր խաւսեսցի ոք և ասիցէ. եթէ այս նոր է. յառաջագոյն եղեալ է. յաւիտենից եղելոցն է նախ քան զմեզ*: Զի ես զստոյգն և զճշմարիտն ի բերանոյ սուրբ հաւրն լսեցի, թէ զինչ որ ի ժամատեղս կարգեալ եմ,*

---

* Ժող. Ա. 10.

1) Բ. ի յուսուցանէր.. եկ՟ղցւ

2) Ե. ի սղ՟մս ի յաղաւթք ի շրկն՟ք գրագ.. Ա. ի շարականն ի յաղօթսն Բ. ի աղօթքն ի շարականն

3) Բ. զի թ՟գրեաց փ. զի գրեաց Գ. աղաւթ մատոյց Գ. աղօթ մատոյցս

4) Ա. չ. եւ մեկնիչք. Ա. տօնացոյցք ի լաւ օրինակէ Բ. եւ յուսոյց.. ընդիր

7) ԲԳ. առնեն

8) Ա. եւ ապրիլ Է ԲԵ. եւ ապրիլի Է Գ. եւ յապրէլի Է

9) Ա. չ. վասն յերկրաւորաց Գ. մին վասն երկրաւորացս Գ. մինն վ՟ս ն՟րց (երկրաւորաց բառի նշանագրի սխալ ընթերցում):

10) Ա. զի ս՟ք աւետիքն ետ Բ. զի ս՟ք աւետիքն ետ զգաբրիէլ հրշ՟տկպին

11) Ա. զմէկն ի յ՟գ

12) Բ. աղբեւրն

13) Բ. ասելն ԴԵ. ողորմեաց

14) Ա. չ. մինչեւ... գալոց ես եւ Ե. մինչ

18) Բ. ի ներքոյ Ա. խօսիցի

20) Ա. ստոյգն... ճօրս մեր լուա

21) Ա. եթէ զինչ Բ. թէ զինչ.